ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ -410 -2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «20» «12» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության նախագահ Հ. Խաչատրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման (տող՝ «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը») (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել «Փարաջանովը հանճար է» խորագրով միջոցառումների շարքի կազմակերպումը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության,

ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,
2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,
2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,
2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է 34096,8 հազար (երեսունչորս միլիոն իննսունվեց հազար ութ հարյուր դրամ) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:
3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:
3.3. Հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2024 թ. հունվարի 10-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացույցային օրը:
4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից

չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» ՀԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Բայրոնի 5
Կառավարական տուն N 2	ՀՀ 1570018400480100, հվհհ 01556218
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	հեռ՝ 010521042
հ/հ 900011032878, հվհհ 02698732	Նախագահ՝
Գլխավոր քարտուղար՝	---------Հ. Խաչատրյան
---------Հ. Հակոբյան	(ստորագրություն)
(ստորագրություն)	Կ.Տ.
Կ.Տ.	

Հավելված N 1
« 20 » « 12 » 2023 թ.
N ՄՇԴ- 410 -2023 պայմանագրի

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Փարաջանովը հանճար է» խորագրով միջոցառումների շարքի

1	Կազմակերպության անվանում	Կինոյի զարգացման «Ոսկե Ծիրան» ՀԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ք. Երևան, Մոսկովյան 3
3	Ծրագրի անվանում	«Փարաջանովը հանճար է» խորագրով միջոցառումների շարք
3.1	Բովանդակություն	2024 թվականին անվանի կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակում, նախատեսվում է հունվարի 9-ին՝ վարպետի ծննդյան օրը իրականացնել մեկնարկային միջոցառումների շարք, մասնավորապես՝ 1. Այցելություն պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու մեծ արվեստագետին, 2. Ինստալացիա անիվների վրա. դեկորներով, ռեկվիզիտով և այլ ատրիբուտներով ձևավորված կոլաժ-մեքենան՝ իբրև շարժական ինստալացիա ողջ օրը կշրջի Երևանի փողոցներով: Մեքենայի վրա կլինեն կոստյումով օրապահներ, որոնք բարձրախոսով կձայնարկեն "Параджанов гений !" 3. Կինոյի տան դիմացի հրապարակի անվանակոչման և Փարաջանովի արձանի բացման արարողություն, նռան գինիով պատրաստված գլինթվեյնի հյուրասիրություն, 4. Կինոյի տան 2-րդ հարկում ցուցահանդեսի բացում՝ Եռապատ ցուցահանդեսի 1-ին պատին կլինեն Փարաջանովի «Արտասվող Ջոկոնդա» կոլաժները, երկրորդ պատին՝ արվեստագետ Դավիթ Գալստյանի կողմից արհեստական բանականությամբ գեներացվող կոլաժները «Լացող Ջոկոնդա» թեմայով: Երրորդ պատի դիմաց ցուցահանդեսի այցելուն ինքը կարող է գեներացնել իր «Լացող Ջոկոնդան» և մի քանի վայրկյանով դառնալ ցուցահանդեսի էքսպոզիցիայի մի մասը: Ցուցահանդեսը այցելուների համար բաց կլինի մեկ շաբաթ,

		5. Շառլ Ազնավուրի հրապարակում հարիսայի հյուրասիրություն՝ բոլոր անցորդների համար, 6. Կստեղծվի Փարաջանովի հայտնի ճաղերով ֆոտոզոնան, որտեղ անցորդները կարող են նկարվել փարաջանովյան նկարի ձևաչափով՝ ճաղավանդակների ներսում, 7. Հարյուր դերասաններ՝ սկսնակ թատերական դերասաններից մինչև հայտնի և սիրված դերասաններ Սայաթ Նովա փողոցով (Խանջյանից մինչև Օպերա) զբոսնելով անցորդներին կբաժանեն «Փարաջանով 100» դաջվածքով նռեր՝ որպես օրվա հուշանվեր, 8. Երեկոյան քաղաքով կշրջի 2-րդ շարժական ինստալացիան անիվների վրա, մեքենա, որի ընթացքից փարաջանովյան մոտիվներով պրոյեկցիան կնետվի մարդկանց տները, իսկ բարձրախոսներից կհնչի Փարաջանովի ձայնը և խոհերը, 9. Կինոյի տանը ողջ օրը կցուցադրվեն Փարաջանովի ֆիլմերը, 10. Ծննդյան օրը կամփոփվի Փարաջանովի տուն-թանգարանում, որտեղ ելույթ կունենան «Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական համույթը և «Գյուրջիև» անսամբլը, կմատուցվի ավանդական հարիսայի հյուրասիրություն: Միջոցառումներն իրականացվելու են հունվարի 09-ին, 11:00 – 21:00:
3.2	Նպատակ	Սերգեյ Փարաջանովի 100-ամյա հոբելյանի մեկնարկին՝ հարգանքի տուրք մատուցել մեծ արվեստագետին, արժևորել լեգենդար կինոգործչի ծննդյան օրը, բարձրացնել հանրության իրազեկվածությունը՝ միաձուլելով փարաջանովյան յուրօրինակ մտածողության ու երևակայական աշխարհի հետ, նպաստել նրա ստեղծագործությունների հանրայնացմանը և տարածմանը:
3.3	Անցկացման ժամկետ	Դեկտեմբեր, 2023թ. – Հունվար, 2024 թ. Բուն միջոցառումները 09.01.2024 թ.
3.4	Անցկացման վայր	ք. Երևան
3.5	Ակնկալվող արդյունքներ	Փարաջանովի ծննդյան օրը ամրապնդել, որպես քաղաքային մշակութային ակտիվության օրը, որի բոլոր բաղադրիչները այս կամ այն կերպ կզուգաբանվեն կամ անմիջականորեն կառնչվեն Փարաջանովի արվեստին:

		Փարաջանովի բազմաբնույթ և բազմերանգ մոտեցումների համատեքստում՝ իր ծննդյան օրը ունենալ բազմաբնագավառ անդրադարձներ՝ կինո, ինստալացիա, երաժշտություն, պար, կերպարվեստ, քանդակ, պերֆորմանս, ծես, դասական կերպարվեստից մինչև անշոշափելի արհեստական բանականություն: Նպաստել Փարաջանովյան ընկալումների բազմազանությանը, հաստատել նրան որպես ոչ միայն անցյալի, այլև ներկայի ու ապագայի անժամանակ արվեստագետ: Հանրայնացնել և տարածել Փարաջանովի արվեստը՝ որպես խոնարհում հանճարեղ արվեստագետի վաստակի և անհատականության առջև:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Միջոցառումների քանակ՝ 10 Մասնակիցների քանակ՝ մոտ 10.000 Շարժական ինստալյացիա՝ 2 Ցուցահանդես՝ 1 Ֆոտոզոնա՝ 1 Համերգային անսամբլ՝ 2 Ֆիլմերի քանակ՝ 5 Հոլովակ՝ 1 ՁԼՄ անդրադարձ՝ մոտ 30

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
---------Հ. Հակոբյան
(ստորագրություն) Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» ՀԿ
ք. Երևան, Բայրոնի 5
ՀՀ 1570018400480100, հվհհ 01556218
հեռ՝ 010521042
Նախագահ՝
---------Հ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 2
«20» «12» 2023 թ.
N ՄՇԴ-410-2023 պայմանագրի

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

«Փարաջանովը հանճար է» խորագրով միջոցառումների շարքի կազմակերպման ծախսերի

N	Ծախսատեսակների անվանումը	Միավոր	Քանակ	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
1.	**Փարաջանովի ֆիլմերի ցուցադրման ծառայություններ, այդ թվում՝**				**3,570.0**
	Ֆիլմերի ցուցադրման հեղինակային իրավունքի ձեռքբերում *(միջին գին)*	ֆիլմ	5	300,000	1,500.0
	Ֆիլմերի տեքստերի թարգմանություն	էջ	230	6,000	1,380.0
	Ֆիլմերի ենթագրերի տեղադրում	էջ	230	3,000	690.0
2.	**Մակագրված նռերի նախագիծ**				**6,120.0**
	Պերֆորմանսի համար նախատեսված նռան ձեռքբերում	կգ	300	1,600	480.0
	Նռան վրա փորագրանշման ծառայություն (300 կգ)	հատ	1	700,000	700.0
	Հայտնի դերասանների ծառայություն	մարդ	10	230,000	2,300.0
	Դերասանների ծառայություն	մարդ	100	25,000	2,500.0
	Նռան տեղափոխման ծառայություն	հատ	1	60,000	60.0
	Փորագրանշանի դիզայնի և ձեռքբերման ծառայություն	հատ	1	80,000	80.0
3.	**Շարժական ինստալացիա N 1**				**1,920.0**
	Տեխնիկական սպասարկման ծառայություն	հատ	1	400,000	400.0
	Նկարչի ծառայություն	հատ	1	500,000	500.0
	Մեքենայի վարձակալության ծառայություն- ավտոքարշակ (2 օր, ներառյալ վառելիքը)	հատ	1	340,000	340.0
	Դերասանի ծառայություն	հատ	1	80,000	80.0
	Ռեկվիզիտների վարձակալության ծառայություն	հատ	1	600,000	600.0
4.	**Ճաղերով ֆոտոզոնայի պատրաստման ծառայություններ, այդ թվում՝**				**1,430.0**
	Բաների տպագրություն օղակներով	մ²	66	3,000	198.0
	Բանտախցի ճաղերի ստեղծում	հատ	1	500,000	500.0
	Տեխնիկական սպասարկում, տեղափոխություն, մոնտաժում և ապամոնտաժում	հատ	1	200,000	200.0
	«Մոսկվա» կինոթատրոնի համար ֆասադի բաների տպագրություն օղակներով	մ²	94	3,000	282.0
	«Մոսկվա» կինոթատրոնի բաներների տեղակայում և հետ հավաքում տեխնիկայի միջոցով	մ²	94	2,660	250.0
	Արձանի բացման արարողություն				**535.0**

5.	Տեխնիկական սպասարկման ծառայություն (բարձրախոսներ, խոսափողներ, կարմիր ժապավեն, կտոր և այլն)	հատ	1	120,000	120.0
	Գլինթվեյնի հյուրասիրության ծառայություն	հատ	150	2,000	300.0
	Կինոյի տան ֆասադի համար օղակներով բաների տպագրության ծառայություն	մ²	23	3,000	69.0
	Տեխնիկայի միջոցով Կինոյի տան բաների տեղակայման և հետ հավաքման ծառայություն	մ²	23	2,000	46.0
6.	**Ցուցահանդես «ՓԱՐԱՋԱՆՈՎ»**				**4,500.0**
	Տեխնիկական սպասարկման ծառայություն (պրոյեկտորներ, լոյսեր, բարձրախոսներ, խոսափողներ, սկոչեր, մեխեր և այլն)	հատ	1	1,000,000	1,000.0
	Հեղինակի վարձատրություն*	մարդ	1	600,000	600.0
	Կինոյի տան երկրորդ հարկի վարձակալություն	օր	7	100,000	700.0
	Արհեստական բանականության մասնագետի ծառայություն	մարդ	1	800,000	800.0
	Սոցիալական հարթակներում գովազդային նյութերի պատրաստման և տարածման ծառայություն	հատ	1	200,000	200.0
	Փարաջանովի ստեղծագործությունների տեղափոխման համար տրանսպորտի վարձակալություն	օր	2	20,000	40.0
	Փարաջանովի ստեղծագործությունների ապահովագրություն	ստեղծագործություն	11	80,000	880.0
	Անվտանգության ծառայություն	օր	7	40,000	280.0
7.	**Հարիսայի հյուրասիրություն**				**939.0**
	Հարիսայի տաղավարի ֆոնային բաների տպագրության ծառայություն	մ²	33	3,000	99.0
	Հարիսայի տաղավարի ֆոնային բաների մետաղական կոնստրուկցիայով մոնտաժման և ապամոնտաժման ծառայություն	հատ	1	120,000	120.0
	Հարիսայի մատուցման ծառայություն	մարդ	400	1,800	720.0
8.	**Շարժական ինստալացիա N 2**				**950.0**
	Մեքենայի վարձակալության ծառայություն (ներառյալ փորձ և վառելիք)	օր	2	100,000	200.0
	Գեներատորի վարձակալության ծառայություն (6 կվ)	օր	2	55,000	110.0
	Պրոյեկտորների վարձակալության ծառայություն	հատ	2	220,000	440.0
	Տեխնիկական սպասարկման ծառայություն	հատ	1	200,000	200.0

9.	**Վարձատրություն** *(ներառյալ հարկերը)**				**2,800.0**
	Ծրագրի հեղինակ	մարդ	1	400,000	400.0
	Ծրագրի ղեկավարի օգնական	մարդ	2	200,000	400.0
	Ծրագրերի համակարգող	մարդ	8	200,000	1,600.0
	Գնումների համակարգող	մարդ	1	200,000	200.0
	Ֆինանսական համակարգող	մարդ	1	200,000	200.0
10.	**Այլ կազմակերպական ծառայություններ՝**				**5,650.0**
	Բրենդավորման ծառայություն	հատ	1	1,500,000	1,500.0
	«Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական համույթի ծառայություն	հատ	1	900,000	900.0
	«Գյուրջիև» համույթի ծառայություն	հատ	1	1,000,000	1,000.0
	Ընդհանուր նախագծի դիզայների ծառայություն	հատ	1	600,000	600.0
	Լուսանկարչական ծառայություն (լուսանկարում միջոցառումների բոլոր հարթակներում)	հատ	1	210,000	210.0
	Տեսանկարահանման ծառայություն	հատ	1	210,000	210.0
	Դրոնով նկարահանման ծառայություն	հատ	1	150,000	150.0
	Տեսահոլովակի մոնտաժման ծառայություն	հատ	1	180,000	180.0
	Լուսային տեխնիկական սպասարկման ծառայություն (քաղաքի տարբեր հատվածներում, այդ թվում Փարաջանովի աստղը)	հատ	1	900,000	900.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**28,414.0**
	ԱԱՀ**				**5,682.8**
	ԱՄԲՈՂՋԸ				**34,096.8**

***Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով**

**** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» ՀԿ
ք. Երևան, Բայրոնի 5
ՀՀ 1570018400480100, հվհհ 01556218
հեռ՝ 010521042
Նախագահ՝
Հ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
«20» «12» 2023 թ.
N ՄՇԴ-410-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«28» «12» 2023 թ.
N ՄՇԴ-410-2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Գլխավոր քարտուղար՝

Տնօրեն՝

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝